ՀՏԴ 93/94

«Մշակ» թերթը Ջուզեպպե Գարիբալդու ազատագրական պայքարի մասին

Ֆելիքս Մովսիսյան

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-141

Հանգուցային բառեր. *Իտալիա, միավորում, հայրենիք, մասոն, անկախություն, հերոս, զորավար, ազգասեր, հայրենասեր*

Նախաբան

XIX դարի իտալական ազգային-ազատագրական պայքարին անդրադարձած հայ պարբերականների թվում ուրույն դիրքորոշմամբ առանձնանում է Թիֆլիսում Գրիգոր Արծրունու խմբագրությամբ լույս տեսած «Մշակ» թերթը: Պարբերականի խմբագիրը չափազանց կարևորում էր Եվրոպայում տեղի ունեցող քաղաքական իրադարձությունները, որոնք մշտապես լուսաբանում է ստացված պաշտոնական և հեռագրական լուրերի և եվրոպական մամուլի հրապարակումների հիման վրա: Նա չի սահմանափակվում ստացված լուրերը զետեղելով թերթի «Արտաքին լուրեր» բաժնում, այլ դրանք հաճախ վերլուծում է և «Արտաքին տեսություն» բաժնում, ներկայացնում իր դիրքորոշումն ու գնահատականը: «Մշակը» լույս տեսավ 1872 թ., երբ Իտալիայի միավորումն արդեն իրողություն էր: Չնայած դրան՝ թերթը Ռիսորջիմենտոյի ղեկավարներ Ջ. Մացցինիի, Ջ. Գարիբալդու և Վիտտորիո Էմմանուել II-ի մահվան կապակցությամբ անդրադարձավ Իտալիայի միավորման գործում նրանց խաղացած դերին և հավուր պատշաճի գնահատեց նրանց ներդրումը: «Մշակն» առանձնակի ջերմությամբ գրում է հատկապես իտալական ազգային հերոս Ջուզեպպե Գարիբալդու մասին, նրա հերոսական ազատագրական պայքարի դրվագները: Թերթը գնահատական է տալիս Ջ. Գարիբալդու անցած ճանապարհին ու գործունեությանը, բավական պատկերավոր ներկայացնում նրա քաղաքական դիմանկարը, որը կարևոր է հայ հասարակական մտքի ու պարբերական մամուլի պատմության համար:

Ջուզեպպե Գարիբալդու ազատագրական պայքարը

«Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու համոզմամբ՝ թերթի ընթերցողներին կհետաքրքրի տեղեկանալ «մահկանացուն կընքող աշխարհածանոթ անմահ զորապետին կենսագրությանը»: Ելնելով այս մտայնությունից՝ նա ներկայացնում է «դյուցազն զորավարի կեանքին մէջ տեսնուած զարմանալի արագ փոփոխությունները» [15, 1]: Թերթը գրում է, որ Ջ. Գարիբալդին ծնվել է 1807 թ. հուլիսին՝ Նիցցայում: Մանուկ հասակից եղել է նավաստի, ուստի «ամեն բանի մէջ աներկիւղ հանդիսացավ»: Այսպես բնութագրելով տոհմական նավաստի Դոմենիկո Գարիբալդու գերդաստանում ծնված Ջուզեպպե Գարիբալդուն՝ «Մշակը» նկատի ունի այն իրողությունը, որ նա 10 տարեկանում բրիտանական «Կոնստացնա» առագաստանավի յունգայի կարգավիճակով նավապետ Անջելո Պեզանտեի հրամանատարությամբ կատարեց իր առաջին ծովային ճանապարհորդությունը դեպի Օդեսա: Նավապետ Ջուզեպպե Ջերվինոյի հրամանատարությամբ «Էնեա» առագաստանավով կատարած հերթական նավարկության ժամանակ պատանի Ջ. Գարիբալդին ականատես եղավ ահավոր նավաբեկության և մարդկային մահերի [18, 17-20]:

1833 թ. Ջ. Գարիբալդին Մարսելում ծանոթացավ իտալական ազատագրական պայքարի նվիրյալ, գաղափարախոս ու կազմակերպիչ Ջուզեպպե Մացցինիի հետ, անդամագրվեց նրա հիմնած «Երիտասարդ Իտալիա» գաղտնի կազմակերպությանը և ստացավ «Բորել» ծածկանունը: Ջ. Մացցինիի առաջարկությամբ նա ծառայության անցավ Սարդինիա-

կան թագավորության նավատորմում և «Էվրիդիկա» նավի անձնակազմին նախապատրաստեց ապստամբության։ 1834 թ. հունիսի 31-ին Ջ. Մացցինիի կազմած պլանի համաձայն ապստամբություն սկսվեց Սավոյայում [21, 133; 25, 35]։ «Մշակն» այս մասին գրում է, որ Ջ. Գարիբալդին 1834 թ. Ջուզեպպե Մացցինիի հետ մասնակցեց Սարդինիայի թագավոր Կառլ Ալբերտի «կառավարության դեմ դավադրությանը»։ Մեծ դժվարությամբ ազատվելով թագավորի պատժից՝ նա երկու տարի անց նորից ընդվզեց։ Այս անգամ մահվան դատապարտվեց, կրկին կարողացավ փախչել և գնաց Ֆրանսիա, որտեղ Մարսելում մաթեմատիկա էր դասավանդում [15, 1]։

Թերթն իրավացի է այնքանով, որ 1834 թ. փետրվարի 4-ի Ջենովայի ապստամբության անհաջողությունից հետո Ջ. Գարիբալդին հարկադրաբար փախավ Մարսել, որտեղ հունիսին ֆրանսիական «Peuple son verain»թերթից տեղեկացավ «ամոթալի մահվան դատապարտվելու» մասին [29, 96-98; 18, 21; 17, 62-64; 27, 7-8]։

«Մշակի» պատմելով՝ Ջ. Գարիբալդին Ֆրանսիայից գնաց Հարավային Ամերիկա, Ուրուգվայում կռվեց Բրազիլիայի դեմ՝ պաշտպանելով Ռիո Գրանդայի հանրապետությունը։ Այստեղ նա ամուսնացավ Անիտա անունով «մի քաջասիրտ աղջկա հետ, որը մահն աչքերին ընկերացավ նրա բոլոր վտանգալից արկածներին»։ Այդ պայքարում Ջ. Գարիբալդին ձերբակալվեց, դատապարտվեց, բայց ներում ստանալով՝ անմիջապես ապստամբություն բարձրացրեց բռնապետ Խուան Ռոսասի դեմ։ Նա իր 800 կողմնակիցների հետ կռվեց և հրաշքով կարողացավ ազատվել հաղթանակ տարած Խ. Ռոսասի «արյունահեղ վրեժխնդրությունից» [15, 1]։

Ջ. Գարիբալդին Հարավային Ամերիկա մեկնեց 1835 թ. սեպտեմբերի 8-ին։ 1837 թ. սկզբից նա մասնակցեց Բրազիլիայից անջատված Ռիո Գրանդայի հանրապետության անկախության համար պայքարին, ձերբակալվեց և կես տարի մնաց տնային կալանքի տակ։ Անհաջող փախուստից հետո ենթարկվեց կտտանքների, երկու ամիս անցկացրեց Բախադա քաղաքի բանտում։ 1838 թ. մայիսին Ռիո Գրանդայի նախագահ Բենտու Գոնսալեսը նրան նշանակեց նավատորմի ծովակալ՝ հանրապետության ռազմածովային ուժերի հրամանատար։ Այդ կարգավիճակում Ջ. Գարիբալդին կռվեց Բուենոս Այրեսի նահանգապետ Խուան Ռոսասի դեմ։ 1842 թ. Ուրուգվայի նախագահ Ֆրուկտուոս Ռիվելայի առաջարկությամբ Ջ. Գարիբալդին գլխավորեց Ուրուգվայի նավատորմը։ 1843 թ. նա կազմավորեց իտալական լեգեոն, որը հաջողությամբ կռվեց Մոնտեվիդեոյի և Սան Անտոնիոյի տակ։ Նրա լեգեոներները կրում էին կարմիր շապիկ, որի համար ստացան «կարմիր շապիկավորներ» մականունը։ Այդ հագուստն ու մականունը հետագայում ուղեկցեց Ջ. Գարիբալդու կամավորներին՝ նրա հետագա բոլոր արշավանքներում [18, 22-145; 17, 74-110]։

Ըստ «Մշակի»՝ 1848 թ. Ջ. Գարիբալդին Մոնտեվիդեոյում հարյուր կամավորներով նավ նստեց ու եկավ Թուրին՝ Ավստրիայի դեմ պատերազմող Սարդինիայի թագավոր Կառլ Ալբերտին «անձնվեր ծառայություն մատուցելու», բայց թագավորը մերժեց նրա առաջարկությունը։ «Հանրապետական Գարիբալդին,– գրում է «Մշակը»,– որ պատրաստ էր իր գլխից հրաժարվել, քան թե իր համոզմունքներից, չէր զլանում միանալ միապետականների հետ և միասին մաքառել թշնամու դեմ։ Այդ շատ հազվագյուտ և անօրինակ երևույթ է, որը հեշտացրեց գործի հաջողությունը, որը պատիվ է բերում իտալական ազգին» [3, 3]։

Թերթը ճիշտ է բնութագրում Ջ. Գարիբալդուն, ով Իտալիայում սկսված ազատագրական պայքարի լուրը ստանալուն պես՝ 1848 թ. ապրիլի 15-ին, 63 կամավորների հետ Մոնտեվիդեոյից «Սպերանցա» նավով վերադարձավ Թուրին, որպեսզի «ծառայի հայրենիքին, թեկուզ շարքային զինվոր», որտեղ իրեն սպասում էր «գեղեցիկ և վեհ խնդիր՝ հայրենիքի ազատագրումը» [18, 149, 243; 17, 127-129]։

Ջ. Գարիբալդին, անտեսելով այն իրողությունը, որ 1834 թ. Կառլ Ալբերտն իրեն դատապարտել է մահվան, իր և իր ընկերների սրերը հուլիսի 4-ին առաջարկեց թագավորին,

որպեսզի «դժբախտ հայրենիքն ազատագրի օտարերկրացիներից ու միավորի Իտալիան»։ Կառլ Ալբերտը չէր հավատում, որ Ջ. Գարիբալդու կամավորական ջոկատը կարող է դեր խաղալ Ավստրիայի դեմ պատերազմում, ուստի մերժեց նրան։ Ջ. Գարիբալդին գնաց Միլան և իր ջոկատի ծառայություններն առաջարկեց Լոմբարդիայի ժամանակավոր կառավարության ղեկավար Գաբրիո Կազատիին։ Ռազմական նախարար Կառլո Սոբրերոն նույնպես չէր հավատում Ջ. Գարիբալդու կամավորների օգտակարությանը՝ գտնելով, որ նրանց կարմիր վերնաշապիկները հիանալի թիրախ են թշնամու համար։ Չնայած խոչընդոտներին՝ Ջ. Գարիբալդին հավաքեց երեք հազար կամավորներ և մասնակցեց Լոմբարդիայի ազատագրման կռիվներին (18, 152-155; 21, 185-186; 17, 133-138]։

«Մշակն» իրավացիորեն գրում է, որ Միլանի ժամանակավոր կառավարությունը որոշեց «օգուտ քաղել» Ջ. Գարիբալդու կամավորների ծառայությունից, ով Ջ. Մացցինիի հետ զորք հավաքեց և Տիրոլում Ավստրիայի դեմ պատերազմեց։ Միլանի անձնատվության ժամանակ նա «վերջինը զինաթափ եղավ» [15, 1]։

Միլանի համար կռիվը տևեց մի քանի ժամ։ Օգոստոսի 4-ին Կառլ Ալբերտը և իր գեներալները քաղաքը լքեցին, իսկ օգոստոսի 6-ին կնքվեց զինադադար։ Ջ. Գարիբալդին չհասցրեց Միլանին օգնության հասնել և իր ջոկատով գնաց Կոմո։ Ճանապարհին նրան միացավ Ջ. Մացցինին, ով իր համախոհներով Կոմոյից անցավ Շվեյցարիա։ Պատերազմում կրած պարտության համար Ջ. Գարիբալդին մեղադրում էր Կառլ Ալբերտին, ով չկարողացավ համախմբել պայքարի ելած հայրենասեր իտալացիներին ու չարդարացրեց նրանց հույսերը։ Նա չճանաչեց օգոստոսի 9-ին Վիջեվանոյում Պիեմոնտի բանակի շտաբի պետ գեներալ Կառլո Կաներա դի Սալասկոյի և ավստրիական գեներալ Հենրիխ ֆոն Հեսսի կնքած հաշտության պայմանագիրը։ Նրանով Ավստրիան և Պիեմոնտը վերականգնում էին 1815 թ. Վիեննայի դաշնագրությամբ հաստատված սահմանները։ Օգոստոսի 13-ին դիմելով իր հայրենակիցներին՝ Ջ. Գարիբալդին կոչ արեց շարունակել պայքարը։ «Բզկտված Իտալիան,– գրում էր նա,– նորից հայտնվեց ստրկության մեջ, և չկար մի ձեռք, որը կարողանար համախմբել նրա ուժերը և այն ուղղեր իր թշնամիների ու դավաճանների դեմ» [18, 154]։

Օգոստոսի 26-ին Լուինոյի մարտում չկարողանալով դիմակայել ավստրիական 15 հազար զորքին՝ Ջ. Գարիբալդու 1500 կամավորները նահանջեցին Շվեյցարիա, բայց զենքը ցած չդրեցին ու շարունակեցին պայքարը։ 1848 թ. աշնանը Ջ. Գարիբալդին Նիցցայում ձևավորեց 400 մարդուց բաղկացած իտալական երկրորդ լեգեոնը և հրաժարվեց աջակցել Կառլ Ալբերտին։ Նա հայտարարեց, որ այսուհետև կռվելու է «հանուն Իտալիայի հանրապետության և իտալական ազգի»։

1848 թ. դեկտեմբերի 21-ին Ջ. Գարիբալդին իր ջոկատով օգնության գնաց Հռոմին, որը 1849 թ. փետրվարի 5-ին նրա առաջարկությամբ հռչակվեց հանրապետություն։ Ապրիլի 27-ին ֆրանսիական առաքական բանակը գեներալ Շառլ Ուդինոյի գլխավորությամբ հարձակվեց Հռոմի վրա, որը Ջ. Գարիբալդին ետ մղեց ու ստիպեց Ուդինոյին նահանջել։ Մայիսին Ջ. Գարիբալդին Պելեստրինոյի մոտ հաղթեց նեապոլիտանական գեներալ Ֆրանչեսկո Լանցին, իսկ Վելլետրի տակ՝ Ֆրանչեսկո II թագավորին։

1849 թ. հունիսի 3-ին 30 հազար օգնական զորք ստացած գեներալ Շ. Ուդինոն կրկին հարձակվեց Հռոմի վրա և պաշարեց այն։ Հուլիսի 2-ի գրոհի ժամանակ Հռոմի պաշտպանությանը լուրջ վտանգ սպառնաց [18, 169-188; 21, 197-198, 203-205; 20, 63-70; 17, 144-159]։

«Մշակի» հավաստի պատմելով՝ 1849 թ., երբ ֆրանսիական զորքերը Լուի Բոնապարտի հրամանով ռմբակոծում էին Հռոմը՝ ցանկանալով վերացնել հանրապետությունը, Ջ. Գարիբալդին «դյուցազնաբար պաշտպանեց Հռոմը և հասարակապետությունը»։ Հռոմի մոտալուտ կորուստը տեսնելով՝ Ջ. Գարիբալդին առաջարկեց պայթեցնել քաղաքի կամուրջները, ամրանալ Սենտ Անժի բերդում, կամ պահապան զորքի հետ քաղաքից դուրս գալ և կռիվը շարունակել Հռոմից դուրս, բայց նրան չլսեցին։ Ջ. Գարիբալդին 400 հետևակ և նույն-

քան հեծյալ զինվորներով դուրս եկավ քաղաքից, ճեղքեց թշնամու պաշարման օղակը, զինվորներին ազատ արձակեց և 200 հավատարիմ մարդկանց հետ մտավ Ադրիատիկ ծով: Ջ. Գարիբալդու կինը «չդիմանալով այս կայծակնթաց փախստեան արագությանը՝ մեռավ» [15, 1]:

Հռոմում ստեղծված օրհասական պայմաններում Ջ. Գարիբալդին հանրապետության եռապետերից «պահանջեց բռնապետություն հաստատել, բայց Ջ. Մացցինին և նրա կողմնակիցներն այդ պահանջը համարեցին տարօրինակ»: Հուլիսի 1-ին Սահմանադիր ժողովը Հռոմի պաշտպանությունը շարունակելու հնարավորության մասին հարցրեց Ջ. Գարիբալդու կարծիքը: Նա ասաց, որ «քաղաքը հնարավոր է պաշտպանել միայն մի քանի օր, պայմանով, որ քաղաքի մյուս կեսը կործանվի»:

Հուլիսի 2-ին Ջ. Գարիբալդին 4 հազար կամավորներով լքեց Հռոմը և շարժվեց օգնության պաշարված Վենետիկին: Մեկ ամիս շարունակ նա տասնյակ անգամ խուսափեց թշնամու բանակի շրջապատումից: Հուլիսի 31-ին նա մտավ չեզոք Սան Մարինո, որտեղ ազատ արձակեց իր ջոկատը և 200 խիզախ կամավորներով գնաց Ադրիատիկ ծովի ափը՝ հույս ունենալով նավակներով հասնել Վենետիկ: Ավստրիական նավերը գնդակոծեցին Ջ. Գարիբալդու նավակները, որոնցից միայն չորսը կարողացան ափ դուրս գալ: Ջ. Գարիբալդին ձերբակալվեց և բանտարկվեց Ջենովայում: Պիեմոնտի խորհրդարանի պահանջով նա ազատ արձակվեց, հերթական անգամ լքեց հայրենիքը, գնաց Թունիս, ապա՝ Մարոկկո, իսկ 1850 թ.՝ Ամերիկա, որտեղ ապրուստի միջոցներ հայթայթելու համար ստիպված էր սևագործ աշխատանք կատարել: 1854 թ. մայիսին Ջ. Գարիբալդին վերադարձավ Կապրերա, որտեղ մինչև 1859 թ. փետրվարը անցկացրած տարիները իր կարծիքով «ոչ մի հետաքրքրություն չեն ներկայացնում» [18, 177-213]:

«Մշակի» պատմելով՝ 1859 թ., երբ «Իտալական անկախության պատերազմը սկսեց», Ջ. Գարիբալդին շտապեց Պիեմոնտի թագավոր Վիտտորիո Էմմանուել II-ի մոտ: Թագավորն իր ենթակայության տակ կռվելու Ջ. Գարիբալդու առաջարկությունը չմերժեց, այլ «հրապարակավ զինքը համբուրելով սիրալիր ընդունելություն արավ» և 1859 թ. մայիսին գեներալի կոչում շնորհեց [15, 1]:

Իրականում 1859 թ. փետրվարին Ջ. Գարիբալդուն Թուրին հրավիրեց Պիեմոնտի կառավարության ղեկավար կոմս Կամիլո Կավուրը: Նա Ավստրիայի դեմ պատերազմելու հարցում 1858 թ. հուլիսի 21-ին Պլոմբիերում գաղտնի համաձայնություն էր ձեռք բերել Ֆրանսիայի կայսր Նապոլեոն III-ի հետ: Ջ. Գարիբալդին ընդունեց Կ. Կավուրի առաջարկությանը՝ կամավորական ջոկատներ հավաքագրելու մասին, որովհետև «սովոր էր իր սկզբունքները ենթարկել Իտալիայի միավորմանը, ինչ ճանապարհով այն տեղի կունենար»: Այդ ծրագիրը նա պաշտպանում էր, երբ Մոնտեվիդեոյից եկավ Իտալիա, որը նախատեսում էր Իտալիան միավորել Պիեմոնտի թագավոր Վիտտորիո Էմմանուել II-ի հովանու ներքո: 1859 թ. մայիսին սարդինական բանակի գեներալի կոչում ստացած Ջ. Գարիբալդին նշանակվեց «Ալպիական որսորդներ» կամավորական կորպուսի հրամանատար: Ըստ Կ. Կավուրի՝ այն պետք է ունենար ընդամենը երեք հազար կամավոր, ինչից Ջ. Գարիբալդին շատ դժգոհ էր [18, 215-219; 17, 210-211; 21, 221-222; 27, 21-22; 20, 270]:

«Մշակի» պատմելով՝ Ջ. Գարիբալդին կամավորների գունդ հավաքեց՝ «Ալպյան որսորդներ» անունով և առաջինը մտավ Լոմբարդիա: Ավստրիայի դեմ կռվում նա պաշտպանողական դիրք բռնեց, գրավեց Վարեզեն, Կոմոն և ավստրիացիներին դուրս մղեց Միլանից ու «ամբողջ Եվրոպան զարմացրեց»: Նա մասնակցեց Մաջենտայի և Սոլֆերինոյի կռիվներին, իսկ «Վիլլաֆրանկայի հաշտությունը և Նիցցայի միությունը նա շատ ծանր տարավ» [15, 1]:

«Մշակն» այս հարցում իրավացի չէ, Ջ. Գարիբալդին պաշտպանողական մարտեր չէր վարում: 1859 թ. մայիսին նա ազատագրեց Վարեզեն, Կոմոն, Բերգամոն, Պալացոլոն, իսկ

հունիսի սկզբին՝ Լոմբարդիայի մեծ մասը: 1859 թ. հունիսի 24-ի Մաջենտայի և Սոլֆերինոյի կռիվներին Ջ. Գարիբալդին չմասնակցեց: Նա դժգոհ մնաց 1859 թ. հուլիսի 11-ի Վիլլաֆրանկայի պայմանագրից, որով Իտալիան չէր միավորվում, այլ միայն Լոմբարդիան անցնում էր Սարդինիայի թագավորությանը: Նա հրաժարական տվեց և գնաց Կենտրոնական Իտալիա, որտեղ, ինչպես հետագայում գրում էր իր հուշերում, կարող էր հավաքել 100 հազար երիտասարդներ, կամ դքսություններում ու Ռոմանիայում գտնվող 30 հազար կամավորներով 15 օրվա ընթացքում վճռել Հարավային Իտալիայի ճակատագիրը: Բայց նա որոշեց «ենթարկվել կարգապահությանը, որն անհրաժեշտ է ցանկացած ռազմական գործի հաջողության համար» [18, 251]:

1859 թ. Ջ. Գարիբալդին այն կարծիքին էր, որ «օտարի լծից ազատագրվելու համար անհրաժեշտ է, որպեսզի Իտալիան Վիտտորիո Էմմանուելի հետ մի ճանապարհով ընթանա»: Այդ պատճառով Ջ. Գարիբալդին իր պարտքը համարեց ենթարկվել թագավորի հրամանին, անկախ ամեն ինչից, «նույնիսկ ստիպելով լռել իր հանրապետական խղճին» [21, 223; 20, 275-276; 18, 241-242, 245; 19, 173-176; 17, 213-224]: Թուրինում Ջ. Գարիբալդին ձեռնամուխ եղավ համախմբելու բոլոր առաջադիմական հոսանքները և դրանք միավորելու «Զինված ազգ» ընկերությունում, որը պայքարը շարունակելու համար պետք է հավաքագրեր 2 մլն կամավոր, բայց թագավորը նրան հորդորեց հրաժարվել այդ մտադրությունից [18, 251-252]:

«Մշակի» հավաստի պատմելով՝ 1860 թ. «ժողովրդական հերոս» Ջ. Գարիբալդին «հազար կամավորներով ձեռնարկեց Սիցիլիայի ազատագրումը»: Նա գնաց Մարսալա, պարտության մատնեց Նեապոլի թագավոր Ֆրանչեսկո II-ի զորքին, հունիսի 21-ին պաշարեց Պալերմոն, գրավեց Մեսսինան և «տեր եղավ Սիցիլիային»: Երեք ամիս անց գեներալ Ջ. Գարիբալդին տիրեց բոլոր նահանգներին, սեպտեմբերի 7-ին մտավ Նեապոլ, «իրագործեց իր հայրենակիցների փափագը» և երկու Սիցիլիաները միավորեց Լոմբարդիայի հետ: Նա «իր դիկտատորությունը հանձնեց» Վիտտորիո Էմմանուելին, նրան «հռչակեց Իտալիայի թագավոր» և առանձնացավ Կապրերա կղզում (3, 3; 10, 3; 15, 2): Ըստ թերթի՝ Իտալիայի վերջնական միավորմանն այդ պահին չէր բավարարում Վենետիկը:

«Մշակը» ճիշտ է ներկայացնում Ջ. Գարիբալդու «հազարյակի» նշանավոր արշավանքը, որն իրականացրեց թագավորի կամքին հակառակ՝ «Իտալիա և Վիտտորիո Էմմանուել» կարգախոսով: Համոզված հանրապետական Ջ. Գարիբալդին գտնում էր, որ տվյալ պահին Պիեմոնտը համարվում է Իտալիայի հիմնական ռազմական ուժը, առանց որի հնարավոր չէ իրականացնել ազատագրական պատերազմ: Պիեմոնտի կառավարությունը հնարավոր բոլոր միջոցներով փորձեց խափանել Ջ. Գարիբալդու արշավանքը: Կոմս Կ. Կավուրը ինքնագլուխ արշավանք կազմակերպելու համար նույնիսկ մտադիր էր ձերբակալել Ջ. Գարիբալդուն, բայց Վիտտորիո Էմանուելը չհամարձակվեց գնալ այդ քայլին, քանի որ «հասարակական կարծիքը կդատապարտեր նրան» [18, 256; 29, 626]:

1860 թ. մայիսի 6-ի լուսաբացին Ջ. Գարիբալդին Ջենովայի նավահանգստից «Պիեմոնտ» և «Լոմբարդիա» շոգենավերով, 1170 կամավորներով, հիմնականում 18-25 տարեկան «Կարմիր շապիկավորներով», ուղղություն վերցրեց դեպի Սիցիլիա: Մայիսի 11-ին նա առանց կռվի մտավ Մարսալա, մայիսի 15-ին հաղթեց Կալատաֆիմի ճակատամարտում, մայիսի 27-ին մտավ Պալերմո, իսկ հուլիսի 27-ին առանց մարտի՝ Մեսսինա: Օգոստոսին Ռեջիոյում տարած հաղթանակը վճռեց Երկու Սիցիլիաների թագավորության մնացած մասի ճակատագիրը: Սեպտեմբերի 7-ի կեսօրին Ջ. Գարիբալդին հաղթականորեն մտավ Նեապոլ, որտեղ նոյեմբերի 7-ին թագավորական զորքով մուտք գործեց նաև Վիտտորիո Էմմանուել II-ը: Նա, օգտվելով Ջ. Գարիբալդու կողմից Սիցիլիայի և Նեապոլի ազատագրումից, դրանք միավորեց Սարդինական թագավորության հետ [18, 255-294; 21, 227-237; 20, 280-286; 17, 239-268]:

«Մշակն» իրավացիորեն գրում է, որ Իտալիայի ամբողջական միավորման համար «մնում էր ազատագրել Հռոմը և Վենետիկը»։ Այդ նպատակով 1862 թ. Ջ. Գարիբալդին արշավեց Կալաբրիա։ Օգոստոսի 29-ին թագավորական բանակը գնդապետ Պալլավիչինիի հրամանատարությամբ Ասպրոմոնտե լեռան վրա նրա ճանապարհը փակեց։ Կռիվ սկսվեց. Ջ. Գարիբալդին ոտքից վիրավորվեց, գերի ընկավ և «անտարակույս կմեռներ, եթե մի ֆրանսիացի վիրաբույժ գնդակը նրա ոտքից չհաներ [1, 3; 15, 2]։

Թերթն իրավացի է. Հռոմն ազատագրելու նպատակով Ջ. Գարիբալդին 1862 թ. հուլիսի 27-ին Կապրերա կղզուց մի խումբ զինակիցների հետ կրկին նավարկեց Սիցիլիա՝ այս անգամ «Հռոմ կամ մահ» կարգախոսով։ Տեղեկանալով Ջ. Գարիբալդու արշավանքի մասին՝ Նապոլեոն III-ն շտապեց տեղեկացնել Վիտտորիո Էմմանուել II-ին, որ կպաշտպանի Հռոմի պապի աշխարհիկ իշխանությունը և թույլ չի տա Հռոմը միավորել Իտալիային։ Օգոստոսի 3-ին Վիտտորիո Էմմանուել II-ը Ջ. Գարիբալդուն անվանեց «խռովարար» և զորք ուղարկեց նրա դեմ։ Օգոստոսի 24-ին Կատանիոյում «իտալացիներին» ուղղված կոչում Ջ. Գարիբալդին դատապարտեց թագավորի կառավարությունը, որը, նրա կարծիքով, «հանդիսանում է իտալական միայն անվանումով» [18, 305; 21, 245; 20, 287-288]։

Ասպրոմոնտեի կռվում ոտքից վիրավորված Ջ. Գարիբալդուն բժշկական օգնություն ցույց տվեցին վիրաբույժներ Ռիպարին, Բազիլեն, Ալբանեզեն և ուրիշներ, բայց գնդակը ոտքից հանեց ռուս վիրաբույժ Ն. Ի. Պիրոգովը [18, 305-311; 21, 245-246; 21, 287-288; 17, 302-313]։

«Մշակի» հավաստի տեղեկություններով՝ 1864 թ. Ջ. Գարիբալդին «հաղթական ճանապարհորդություն կատարեց Անգլիայում», որտեղից վերադառնալով՝ Նեապոլից պատգամավոր ընտրվեց Իտալիայի խորհրդարանում և «միանգամայն իտալական Ֆրան-Մասօնի ընկերութեան գլխավոր անուանեցաւ» [15, 2]։ «Մշակն» իրավացի է. վարչապետ լորդ Պալմերստոնի հրավերով 1864 թ. ապրիլին Անգլիա ժամանած Ջ. Գարիբալդուն Սաութհեմփթոնում, ապա Ուայթ կղզում և Լոնդոնում աներևակայելի ջերմ ու փառավոր ընդունելություն ցույց տվեցին և մեծամեծ պատիվների արժանացրին [17, 317-319; 23, 234]։

«Մշակը» ճիշտ էր տեղեկացված նաև Ջ. Գարիբալդու մասոն լինելու մասին։ Ջ. Գարիբալդին 1844 թ. Բրազիլիայում անդամագրվել էր «L'Asile de la Vertu» («Արիության ապաստան») և Մոնտեվիդեոյի «Les Amis de la Patrie» («Հայրենիքի բարեկամներ») մասոնական օթյակներին։ Ամերիկայի Միացյալ Նահանգներում վտարանդիության մեջ գտնված ժամանակ նա ակտիվորեն մասնակցում էր Նյու Յորքի նահանգի Սթեյթլթոնի «Թոմփինս» թիվ 471 օթյակի աշխատանքներին։ 1863 թ. Ջ. Գարիբալդին Պալերմոյի «Մեծ Արևելք» օթյակի Մեծ Վարպետն էր, իսկ 1864 թ. «Իտալիայի Մեծ Արևելք օթյակի» Մեծ Վարպետը։ 1872 թ. Ջ. Գարիբալդին ցմահ ընտրվեց այդ օթյակի Պատվավոր Մեծ Վարպետ (17, 102, 320; 26, 278; 24, 123)։

1866 թ. հունիսին սկսված ավստրո-պրուսական պատերազմում, գրում է «Մշակը», իտալացիների դաշնակից պրուսացիները Կենիգրեցի մոտ «փառավոր հաղթանակ տարան» ավստրիացիների նկատմամբ, իսկ Ջ. Գարիբալդին հաջողությամբ կռվում էր Տիրոլում։ Հուլիսի 3-ին Սադովայի տակ ավստրիացիների «աղետալի վախճանը նրան կրկին իր կղզին ուղարկեց» [3, 3; 15,2]։ Ավստրո-պրուսական պատերազմում Իտալիան 1866 թ. ապրիլի 8-ի գաղտնի համաձայնագրով, որպես Պրուսիայի դաշնակից, պետք է պատերազմ հայտարարեր Ավստրիային և հաղթանակի դեպքում ստանար Վենետիկը։ Վիտտորիո Էմմանուել II-ը, հաշվի առնելով Ջ.Գարիբալդու հանրաճանաչությունը, գեներալ Նիկոլո Ֆաբրիցիի միջոցով հունիսին նրան առաջարկեց իր կամավորներով մասնակցել պատերազմին։ Ջ. Գարիբալդին հավաքեց 38 հազար «կարմիր շապիկավոր» և պատերազմում երկրորդական ճակատ համարվող Հարավային Տիրոլում գլխովին ջախջախեց ավստրիացիներին, փոխանակ ինչպես ինքն էր գտնում, նրանց դեմ կռվեր Ադրիատիկ ծովի ափին։ 1866 թ. հոկտեմբերի 3-ին ավստրո-իտալական հաշտության պայմանագրով Վենետիկն անցավ Իտալիային, իսկ

Ջ. Գարիբալդին վերադարձավ Կապրերա [18, 312-326; 21, 248-249; 20, 292-294; 17, 335-345; 27, 34-35]: Այս հաջողությունից հետո, ըստ «Մշակի», Իտալիայի միավորմանը պակասում էր միայն Հռոմը [3, 3]:

1866 թ. դեկտեմբերին, երբ ֆրանսիական զորքը դուրս եկավ Պապական պետությունից, պատմում է «Մշակը», Ջ. Գարիբալդին, օգտվելով դրանից, նորից փորձեց Հռոմն ազատագրել: Բայց 1867 թ. նոյեմբերին անհաջողություն կրեց և վերստին բռնվեց: Կապրերա տանելու ճանապարհին, լինելով Պիեմոնտի թագավորական ռազմական նավի հսկողության տակ, փախավ, գնաց Ֆլորենցիա, ապա Մոնթե Ռոտոնդոյի կռվում հաղթանակ տարավ [10, 4; 15, 2]:

«Մշակը» հավաստի է ներկայացնում Ջ. Գարիբալդու հետագա պայքարը Հռոմի ազատագրման նպատակով: 1867 թ. ամռանը Ջ. Գարիբալդին Կենտրոնական և Հյուսիսային Իտալիայում քարոզչական ուղևորություն կատարեց՝ ամենուրեք կոչ անելով Հռոմն ազատագրելու նպատակով նոր արշավանք իրականացնել: Սեպտեմբերի 25-ին նա ձերբակալվեց և ազատ արձակվելուց հետո՝ հոկտեմբերի 14-ին, լքեց Կապրերան ու իր համախոհների հետ գնաց Ֆլորենցիա, ապա հոկտեմբերի 25-ին նա Հռոմի պապի զորքին հաղթեց Մոնտե Ռոտոնդոյում, բայց նոյեմբերի 3-ին Մենտանի մոտ պարտություն կրեց ֆրանս-պապական միացյալ զորքից: Ջ. Գարիբալդին կրկին ձերբակալվեց և ուղեկալի հսկողությամբ ուղարկվեց Կապրերա: Այդպես ավարտվեց Հռոմն ազատագրելու Ջ. Գարիբալդու վերջին փորձը (18, 326-343; 21, 250-251; 20, 294-297; 17, 354-373):

«Մշակը» զարմանք է հայտնում, որ ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակ Ջ. Գարիբալդին, «փոխանակ Հռոմի մասին մտածելու, գնաց Փարիզ՝ ֆրանսիացիներին օգնության»: Թերթն ընդգծում է, որ «Շնորհապարտ Ֆրանսիան չորս նահանգների ներկայացուցիչ անուանելով պատուեց վեհանձն զորավարին» [15, 2]: «Մշակը» նկատի ունի այն, որ ֆրանս-պրուսական պատերազմում Ջ. Գարիբալդին ֆրանսիական Ազգային պաշտպանության կառավարությանն առաջարկեց իր օգնությունը և, ստանալով համաձայնություն, գնաց Ֆրանսիա՝ «այդ դժբաղդ երկրին տալու այն, ինչն իրենից մնացել էր» [18, 366]: Ներքին գործերի նախարար Լեոն Գամբետայի առաջարկությամբ Ջ. Գարիբալդին Ֆրանսիայի արևելքում օտարերկրացի կամավորներից ձևավորեց 15 հազարանոց Վոգեզյան բանակ, որի երկրորդ և չորրորդ բրիգադները գլխավորում էին իր տղաները՝ Մենոտտին և Ռիչչոտտին: Մի քանի մարտերում Ջ. Գարիբալդին հաջողություններ ունեցավ, 1871 թ. հունվարին Դիժոնի մոտ ջախջախեց պրուսացիներին և ազատագրեց Բուրգունդիայի մայրաքաղաքը: Մարտի 8-ին Ֆրանսիայի Ազգային ժողովում Վիկտոր Հյուգոն, բարձր գնահատելով Ջ. Գարիբալդու դերը Վոգեզյան բանակի գործողություններում, հայտարարեց. «Ֆրանսիացիների կողմից կռված բոլոր գեներալներից նա միակն է, ով պարտություն չի կրել» [30, 71]:

Ֆրանսիային մատուցած ծառայությունների համար Ջ. Գարիբալդին 1871 թ. փետրվարի 5-ին երեք դեպարտամենտներից և Ալժիրից չափազանց բարձր քվեներով ընտրվեց Ազգային ժողովի պատգամավոր, բայց օրեր անց՝ փետրվարի 13-ին, հրաժարվեց պատգամավորի մանդատից [28, 171; 22, 170, 662-678; 17, 388-402]: Նա լքեց Ֆրանսիան՝ «գիտակցելով, որ այլևս ոչինչ չի կարող անել այդ թշվառ երկրի համար, որին եկավ ծառայելու, երբ հայտնվել էր դժբախտության մեջ» [18, 365], և վերադարձավ Կապրերա: 1871թ. մարտի 28-ին Փարիզի կոմունայի Կենտրոնական կոմիտեն Ջ. Գարիբալդուն ընտրեց Ազգային գվարդիայի գլխավոր հրամանատար և առաջարկեց օգնության գնալ կոմունային: Կապրերայում գտնվող Ջ. Գարիբալդին, վկայակոչելով առողջական վիճակը, մերժեց այդ առաջարկությունը: Իրականում նա դեմ էր, որ ֆրանսիացիները կռվում են ֆրանսիացիների դեմ, և Փարիզում գտնվող Ռիչչոտտին խորհուրդ էր տալիս «չխառնվել այդ եղբայրասպան կռվին»:

Ջ. Գարիբալդու կենսագրությունից երևում է, գրում է «Մշակը», ոչ միայն նրա «անցկացրած հուզումնալից կյանքը, ամբողջ էությամբ հայրենիքին ծառայություն մատուցելու

նվիրվածությունը, այլև օտար ազգերի ազատության համար նույնքան անձնվիրաբար պայքարը։ Ահա այս տեսակ արարածների համար է արձան, երգ, փառք, պատիվ, անմահ անուն և այլն» [15, 2]։

Ջ. Գարիբալդու գնահատականը

Իտալիայի միավորման համար պայքարը հաջողությամբ ավարտելուց և Ֆրանսիայի անկախության համար մարտնչելուց հետո «Ջ. Գարիբալդին, «Մշակի» դիտարկմամբ, շարունակում է մնալ իր հայրենակիցների ուշադրության կենտրոնում։ Ըստ թերթի՝ «Նա չի կորցրել իր ժողովրդականությունը։ Նրա առջև խոնարհում են թե միապետականները, թե հանրապետականները» [8, 4]։ Թերթը Ջ. Գարիբալդու մասին իտալական մամուլում տպագրված յուրաքանչյուր լուր հայտնում է իր ընթերցողներին։ «Երևելի ռամկապետականը»,- գրում է թերթը,- 1872 թ. մի ընդարձակ հոդված է տպագրել, որտեղ իտալացիներին խորհուրդ է տալիս սահմանադրությունից հանել առաջին հոդվածը, «որի զորությամբ կաթոլիկ եկեղեցին համարում է պաշտոնական, տիրապետող եկեղեցին պետության մեջ»։ Ջ. Գարիբալդին միաժամանակ առաջարկում է Հռոմից վտարել բոլոր եկեղեցական միաբանությունները, մտցնել ձրի, պարտադիր և աշխարհիկ ուսուցում, բարելավել աշխատավորների վիճակը, վերացնել անուղղակի հարկերը, նվազեցնել պետական ծախսերը, սահմանել ժողովների ազատություն և համընդհանուր ընտրական իրավունք [2, 4]։

«Մշակը» 1873 թ. օգոստոսին տեղեկացնում է, որ Ջ. Գարիբալդին երկարատև հիվանդությունից ապաքինվել է և առողջ է, իսկ 1874 թ. հունիսին գրում է, որ իտալական լրագրերն անհանգստացնող լուրեր են տպագրում նրա առողջության կտրուկ վատթարացման մասին։ Մայիսի 6-ին նա այնքան հիվանդ էր, որ նույնիսկ ի վիճակի չէր ընդունել այցելուների [3, 4; 4, 4]։ «Մշակն» անդրադառնում է «հազարյակի արշավանքին» նվիրված Ջ. Գարիբալդու գրքի հրատարակմանը, որ 4500 բաժանորդ ունի։ Գրքի առաջաբանում նա իտալական երիտասարդությանը խորհուրդ է տալիս քաղաքականությունով զբաղվել [5, 3]։ «Մշակի» պատմելով՝ 1875 թ. հունվարին Ջ. Գարիբալդին, որպես իտալական խորհրդարանի պատգամավոր, ժամանեց Հռոմ, որի բնակչության կողմից «փառավոր ընդունելության արժանացավ»։ Երկաթուղային կայանում նրան ընդունեց Հռոմի քաղաքագլուխը։ Նրա պատվին քաղաքը զարդարված էր դրոշներով, իսկ փողոցները լեփ-լեցուն էին նրան դիմավորող մարդկանցով։ Հռոմի քաղաքային վարչությունը որոշեց ոսկե մեդալ պատրաստել՝ ի հիշատակ այն ծառայությունների, որ «Ջ. Գարիբալդին մատուցել է 1849 թ. քաղաքը պաշտպանելով ֆրանսիական զորքերից [6, 3]։ Ջ. Գարիբալդին, «մի կողմ թողնելով քաղաքական ձգտումները», գրում է «Մշակը», այժմ զբաղված է տնտեսական ծրագրերով։ Նրա առաջարկությամբ Տորլոնիա իշխանը իր միջոցներից 35 մլն ֆրանկ ծախսեց Ֆուչինոյի լճակը չորացնելու նպատակով, որի համար թագավորը նրան պարգևատրեց մեդալով։ Վիտտորիո Էմմանուելի և Ջ. Գարիբալդու զրույցից հետո Իտալիայի խորհրդարանը թագավորի գիտությամբ հավանություն տվեց Ջ. Գարիբալդու նախագծին և 20 մլն ֆրանկ հատկացրեց Հռոմի նահանգում ճահիճները չորացնելու և Տիբր գետի հունը մաքրելու համար [7; 9, 3]։

Հայրենիքին անմնացորդ ծառայելու և օգտակար լինելու մտահոգությամբ ապրող Ջ. Գարիբալդին գտնվում էր նյութական ծանր վիճակում, կուտակել էր մեծ պարտքեր, որոնք վերադարձնելու միջոցներ չուներ։ 1876 թ. Կապրերայում հիվանդ Ջ. Գարիբալդուն այցելեցին արդարադատության նախարար Անջելո Մանչինին և ներքին գործերի նախարար Ջովաննի Նիկոտերան ու մեծ դժվարությամբ համոզեցին նրան ընդունել 1874 թ. նոյեմբերի 19-ի կառավարության որոշմամբ իրեն հատկացված 50 հազար լիր ռենտան և նույնքան տարեկան թոշակը [17, 432-434; 25, 273-274]։

Եվրոպական մամուլի լրատվությամբ՝ «Մշակը» հանգամանորեն անդրադառնում է Ջ. Գարիբալդու մահվանը, որի կապակցությամբ մեկ տասնյակից ավելի հոդվածներում մանրամասն ներկայացնում է նրա կյանքի վերջին օրերը, ժամերը, հիվանդությունը և

կտակը։ «Մշակի» դիտարկմամբ՝ Ջ. Գարիբալդու մահվան «լուրը ցավալի տպավորություն թողեց ամբողջ Իտալիայում»։ Հունիսի 2-ին ամենուրեք փակվեցին բոլոր ուսումնարանները, համալսարանները, թատրոնները, խանութներն ու բորսան, անգամ դատարաններն ու վարչական հաստատությունները։ Բոլոր թերթերը, բացի կղերականներից, «լույս տեսան սև շրջանակով և նրա կենսագրությունը ներկայացնող գովասանքներով»։ Ջենովայում հետաձգվեց մացցինիական տոնախմբությունը։ Երկրով մեկ հանգանակություն սկսվեց Ջ. Գարիբալդու արձանը կանգնեցնելու համար։

«Մշակի» պատմելով՝ հունիսի 3-ին Իտալիայի սենատը որոշեց Ջ. Գարիբալդու հիշատակը հարգելու համար դադարեցնել իր նիստերը մինչև հունիսի 12-ը, Սենատի անդամները երկու ամիս սգո հագուստ կկրեն և ամբողջ կազմով կմասնակցեն Հռոմում նրա հիշատակին նվիրված արարողությանը։ Սենատը միաձայն հաստատեց ներքին գործերի նախարարի բոլոր առաջարկությունները Ջ. Գարիբալդու հիշատակը հարգելու համար։ Կառավարության նախագահի առաջարկությամբ հունիսի 4-ին նախատեսված սահմանադրության օրվան նվիրված տոնակատարությունը տեղափոխվեց հունիսի 18-ին։ Կառավարության որոշմամբ՝ Ջ. Գարիբալդու հուղարկավորությունը կկայանա պետության միջոցներով, նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամը տարեկան 10 հազար լիրա թոշակ կստանա, նրա համար «կկառուցվի ազգային արձան», Կապրերա կղզին այսուհետև կկոչվի նրա անունով [11, 3-4; 12, 2-3; 13, 2-3]։

Այս ամենը վկայում է այն մասին, եզրակացնում է «Մշակը», որ «Իտալիան ներկայացնում է մի հոգով ապրող, մեծ և ազնիվ ազգության, որ զգում է իր արժանավորությունը», երբ խոսքը վերաբերում է հայրենիքի համար թանկագին ու գնահատելի մարդկանց։ «Մշակի» գնահատմամբ՝ այդ եզակի մարդկանցից մեկը Ջ. Գարիբալդին է, ում «նման հերոսները թանկ են հայրենիքի համար, կազմում են նրա փառքը, պատիվն ու մեծությունը։ Նրանք վճռում են ժողովրդի ճակատագիրը, այդ ժողովրդի ծնունդն են ու պատկերը» [13, 3]։

«Մշակը» Ջ. Գարիբալդուն բնութագրում է որպես «ազատության համար հոգին տվող, սկզբունքի համար կրակի, կայծակների դեմ մարտնչող, վախ կոչված բանը մտքից չանցկացնող, անվեհեր քաջամարտիկ զորապետ» [15, 1]։ «Մշակի» խմբագիր Գ. Արծրունու դիտարկմամբ՝ «մեծ իտալացու մահը աննկարագրելի վիշտ պատճառեց»։ Դրանում համոզվում ենք իտալական լրագրերի սև շրջանակներով պատված Ջ. Գարիբալդու կենսագրությունը կարդալիս, որոնց մեջ «անզսպելի սուգ է նշմարվում, կարծես թե Իտալիան կրում է ազգային ամենասարսափելի դժբախտությունը»։ Ջ. Գարիբալդու մահվան մասին «գրում ենք և լաց ենք լինում» խոսքերը, «Մշակի» համոզմամբ, «համարձակ կարող են ասել Իտալիայի հասարակական կարծիքն արտահայտող բոլոր լրագրերը»։ Դրա վկայությունը «Մշակը» համարում է ոչ միայն իտալական ու եվրոպական մամուլի բազմաթիվ հրապարակումները, այլև Իտալիայի խորհրդարանի նախագահի, կառավարության անդամների ու պատգամավորների՝ Ջ. Գարիբալդուն տված գնահատականը։ Թերթի պատմելով՝ հունիսի 3-ին Իտալիայի խորհրդարանի նախագահը, բացելով նիստը, հայտարարեց. «Իտալիայի վրա ազգային դժբախտություն է ծանրացել. մահացավ Ջուզեպպե Գարիբալդին»։ Այնուհետև նա ներկայացրեց «իտալական ամենամեծ քաղաքացու երևելի գործերը և հայրենիքին մատուցած անձնազոհ ծառայությունները»։ Նույն նիստում Ջ. Գարիբալդու զինակիցներից սիցիլական արշավանքի մասնակից Ֆրանչեսկո Կրիսպին իր խոսքում նշեց, որ Ջ. Գարիբալդին սովորական «մարդ չէր, այլ գերբնական էակ, անմատչելի ուժ»։ Նրա կարծիքով՝ իտալացիները Ջ. Գարիբալդուն «երկրպագում են ինչպես Աստծուն, որովհետև նրա մեջ գերմարդկային զորություն էին ստանում» [13, 3]։

Խորհրդարանի պատգամավոր Բաներն ասաց, որ Ջ. Գարիբալդուն բնութագրելու համար «անհրաժեշտ խոսքեր չկան», նրա և Իտալիայի «անունները կանցնեն սերնդեսերունդ, անբաժան, անխզելի կապերով միացած» [13, 2-3]։ Խորհրդարանում ներկայացված

կուսակցությունները միաձայն խոստովանեցին, որ Ջ. Գարիբալդուն կորցնելով, «նրանք կորցրին իտալական ազգասիրության ամենաբարձր գաղափարը, ազատ և միացած հայրենիքի ամենալուսավոր ներկայացուցչին [13, 3]։

«Մշակը» տպագրում է Միլանի «Secolo» լրագրի առաջնորդող հոդվածը Ջ. Գարիբալդու մահվան կապակցությամբ, որտեղ նա բնութագրվում էր իտալական «ժողովրդի առաջնորդ և ուսուցիչ, ... մարդկության ամենամաքուր և ամենաազնիվ պատկերը»։ Ըստ թերթի՝ Ջ. Գարիբալդին «Պրոմեթևսն է, ով ազատեց Իտալիան ստրկությունից։ Նա Էպամինոնդի չափ քաջ էր, Տոմոլեսնի չափ փառավոր, Ցինցինատիի նման համեստ և հասարակ, Սպարտակկի նման հալածվածների պաշտպան, Վաշինգտոնի նման անշահասեր ազգասեր, Մացցինիի չափ մարդասեր» [13, 3]։

«Մշակը» նշում է, որ Ջ. Գարիբալդու մահը սոսկ Իտալիային վիշտ չպատճառեց, այլև «ամբողջ Եվրոպայի մեջ հարգանք բարձրացրեց դեպի իտալական մեծ ազգասերի հիշատակը»։ Թերթի դիտարկմամբ՝ «հանգուցյալ հերոսի քաջագործությունները և բարձր հատկությունները գովելով, ժողովուրդները համակրություն են հայտնում և այն երկրին, որ ծնեց նրան իր բարօրության և մարդկությունը զարդարելու համար» [15, 3]։

«Մշակի» հավաստի տեղեկություններով՝ Ֆրանսիայի խորհրդարանը հունիսի 3-ին «մեծ իտալացու» հիշատակը հարգելով դադարեցրեց նիստերը։ Կառավարությունը որոշեց պատվիրակություն ուղարկել նրա հուղարկավորությանը մասնակցելու համար, Փարիզի գլխավոր փողոցներից մեկը անվանակոչվեց Ջ. Գարիբալդու անունով։ Կառավարության ղեկավար Լեոն Գամբետան, նախկին վարչապետ Շառլ Ֆրեսյինեն, անվանի գրող Վիկտոր Հյուգոն, տասնյակ ընկերություններ, միություններ և քաղաքներ իրենց ցավակցությունը հայտնեցին «երևելի Իտալացու մահվանը և համակրություն Իտալիային»։ Հանգանակություն է կատարվում Փարիզում Ջ. Գարիբալդու արձանը կանգնեցնելու համար։ Իտալական ժողովրդի համար այս ծանր պահին, գրում է «Մշակը», «ֆրանսիական ժողովուրդը ցույց տվեց, որ մյուսներից ավելի է հասկանում իտալական հերոսի մեծությունը և նրա հիշատակը մյուսներից ավելի է իր համար սրբազան համարում» [15, 3]։ Թերթի պատմելով՝ Լոնդոնի իոլանդական համայնքը միաձայն որոշմամբ ցավակցական նամակ հղեց «Իտալական անկախության հերոսի» ընտանիքին, որտեղ ասվում է. «միայն Ջ. Գարիբալդու ազգասիրության և ժողովրդի մեջ նրա գրգռած ոգևորության շնորհիվ Իտալիային հաջողվեց տեղ բռնել մեծ տերությունների շարքում» [16, 3]։

«Մշակն» այնուհետև մանրամասն նկարագրում է Կապրերա կղզում հունիսի 6-ին կայացած Ջ. Գարիբալդու հուղարկավորությունը։ Թերթի պատմելով՝ հունիսի 1-ին Ջ. Գարիբալդին պատրաստվեց մահվան և հրամայեց երեխաներին հեռացնել, որպեսզի նրանք ներկա չգտնվեն իր մահվան տանջանքներին։ «Ազատության համար հոգին տվող, սկզբունքի համար կրակի կայծակների դեմ մարտնչող, վախ կոչված բանը մտքից չանցկացնող, անվեհեր քաջամարտիկ զորապետը» մահվանից առաջ մի քանի անգամ հարցրեց իր որդուն՝ բժիշկ Ալբանեզին բերող շոգենավը դեռ չի՞ եկել։ Ըստ «Մշակի», եթե բժիշկն անգամ ժամանակին տեղ հասներ, Ջ. Գարիբալդու կյանքը չէր կարողանալու փրկել, որովհետև նա անհուսալի հիվանդ էր։ Ակնհայտ է, գրում է թերթը, որ «նա ցանկացել է ապրել, բայց ամենևին ոչ կյանքը սիրելու կամ ապրելու ծարավ ունենալու համար»։ Եթե կյանքը Ջ. Գարիբալդու համար նշանակություն ունենար, ապա հայրենիքն ազատագրելու «նպատակին հասնելու համար հազար անգամ կյանքը վտանգի չէր ենթարկի և մահվան հետ կատաղաբար չէր մաքառի»։ Ջ. Գարիբալդու նման «ազատամիտ մարդիկ մարմնապաշտ լինել չեն կարող։ Եթե նրանք ցանկանում են ապրել, ապա ոչ իրենց համար»,- եզրակացնում է «Մշակը» [15, 1]։ Թերթի պատմելով՝ Ջ. Գարիբալդու աճյունը դրված էր նրա տանը, որի դահլիճը սգո սենյակ էր դարձել։ Հանգուցյալը կրում էր սպիտակ պունչո, որը սովորաբար հագնում էր կենդանի ժամանակ, գլուխը ծածկված էր թավշե սև գլխարկով։ Նրա դեմքը բոլո-

ռովին չէր փոխվել, կարելի է մտածել, որ նա կենդանի է։ Դագաղի մոտ կանգնած էին պատվո պահակներ՝ կազմված նավաստիներից ու սպաներից։ Ջ. Գարիբալդու հուղարկավորությունը չընթացավ 1881 թ. սեպտեմբերի 17-ին կազմած Ջ. Գարիբալդու կտակի համաձայն։ «Մշակը» գրում է, որ մահվանից առաջ նա կտակել էր իր դիակը հրկիզել, մոխիրը լցնել ալ կարմիր սափորի մեջ և հուղարկավորել Կապրերայում՝ իր այգու ակացիայի տակ, հանգուցյալ երկու աղջիկների գերեզմանների կողքին [11, 3-4; 12, 2-3; 15, 2]։

«Մշակն» իրավացի է. երկար քննարկումից հետո Ջ. Գարիբալդու ընտանիքի անդամներն ու զինակիցները որոշեցին նրա դիակը չհրկիզել, բայց մնացած հարցերում կատարել հանգուցյալի վերջին կամքը։ Նրանց կարծիքով՝ դիակիզումը կվիրավորեր ժողովրդի զգացմունքները, քանի որ «Ջ. Գարիբալդին իրեն չի պատկանում։ Նա պատկանում է Իտալիային և առասպելին» [17, 445-446]։

«Մշակի» պատմելով՝ Ջ. Գարիբալդուն հուղարկավորեցին կարմիր վերնաշապիկով, ոսկեկար ծածկոցով դագաղի մեջ, իր կտակած տեղում։ Դեպի գերեզմանատուն տանող ճանապարհը «ծածկված էր հազարավոր պսակներով, որոնք ուղարկված էին Իտալիայի և ամբողջ աշխարհի զանազան կողմերից»։ Հուղարկավորության ժամանակ դամբանական ճառեր ասացին սենատի անդամ Վիտտորիո Ալֆիերին, պատգամավոր Ֆրանչեսկո Ֆարինին, արդարադատության նախարար Զանարդելին, ռազմական նախարար Ֆերրեռն, Ջ. Գարիբալդու զինակից Ֆրանչեսկո Կրիսպին [15, 1-2]։

«Մշակի» բնութագրմամբ՝ Ջ. Գարիբալդին սոսկ նավապետ, արհեստավոր, գրող, ինքնակենսագիր, զորավար, ազատության և անկախության մարտիկ ու քաղաքագետ չէր, այլև պետական մտածողությամբ օժտված մեծ անհատ։ Նա մահվանից առաջ հանրապետական կուսակցության առաջնորդին գրած իր վերջին նամակում խորհուրդ էր տալիս չքննադատել իտալական միապետությունը։ Նրա կարծիքով՝ Սավոյան արքայատոհմը «Իտալիայի համար շատ գործեր է կատարել և սիրո ու հարգանքի արժանի է»։ Նրան պաշտպանում է իտալական ժողովրդի մեծամասնությունը, ոստի մենք պարտավոր ենք «հարգել մեծամասնության կամքը։ Չճանաչելով այդ կամքը և դրա դեմ պայքարելով, մենք ներքին պատերազմ կհարուցենք և կքանդենք մեր սեփական գործը» [14, 3]։

«Մշակի» կարծիքով՝ Ջ. Գարիբալդին նշանավոր այլ անհատների նման իրենից հետո թողեց կատարած մեծ գործեր, բարի համբավ ու «գեղեցիկ հիշատակներ»։ Թերթն այդ հիշատակներից է համարում նրա մուգ կարմիր վերնաշապիկը, անեզր գլխարկը և լայնարձակ, առանց թևքերի վերարկուն, որով ցանկանում էր ցույց տալ, որ «մարդու թևերը պետք է ազատ լինեն և ոչ թե թենոցների մեջ բանտարկվեն»։ Մարդիկ այնքան հարգում են նրա թողած այս «վսեմ ու քաղցր հիշատակները, որ դրանք ամենայն սիրով գործածում են»։

«Մշակի» համոզմամբ՝ Ջ. Գարիբալդու գործը չի մահացել, նա իրենից հետո մեծ հետք է թողել մարդկության համար։ Իտալիայի «երևելի ազգասերի» մատուցած ծառայություններն իր հայրենիքին կենդանի ժամանակ շարունակում են ազդել և նրա մահից հետո հանգուցյալ հերոսի քաջագործությունները և մարդկային բարձր որակները գովաբանելով, «ժողովուրդները համակրություն են հայտնում և այն երկրին, որ ծնեց նրան իր բարօրության ու մարդկությունը զարդարելու համար»։ Ըստ թերթի՝ Ջ. Գարիբալդու «հիշատակն ավելին է, քան նշանավոր մարդկանց թողած գործերը, քանի որ այն համամարդկային նշանակություն ունի»։

«Մշակը» Ջ. Գարիբալդուն բնութագրում է ոչ միայն որպես անվանի զորավար, հայրենասեր, երևելի անհատականություն, այլև մեծ մասոն, թեև այդ մասին ուղիղ չի արտահայտվում։ «Միատեսակ զգացմունք հայտնելով երևելի իտալացու նկատմամբ,– գրում է «Մշակը»,– լուսավորյալ աշխարհը ավելի ուժեղ է զգում այն շահերի համերաշխությունը, որոնցով կապված են միմյանց հետ տարբեր երկրներն ու պետությունները, ավելի ուժեղ է զգում խաղաղության պահանջը» [15, 3]։

Եզրակացություն

«Մշակ» թերթն Իտալական Ռիսորջիմենտոյի երևելի դեմքերից կարևորում է Ջ. Մացցինիին և Ջ. Գարիբալդուն, որոնց «փառավոր անունները իտալացիների սրտերում անշրջելի կերպով դրոշմվեցան»: Ջուզեպպե Գարիբալդուն նվիրված մեկ տասնյակից ավելի հրապարակումներում չափազանց կարևորում է նրա դերը հայրենիքի ազատության և անկախության համար մղվող պայքարում: Թերթը նրան անվանում է մեծ իտալացի, հայրենասեր, ազգասեր, հայրենիքի անկախության ու միավորման համար պայքարի քաջ զինվորական, ում անունը հայտնի է ամբողջ Եվրոպայում: «Մշակի» բնութագրմամբ՝ Ջ. Գարիբալդին իտալական ազգային հերոս է, անկախության աննկուն մարտիկ, ով «ներկայացնում է իր անձամբ մարդկային պատմության մեջ վաղուց չտեսած ժողովրդական հերոսի պատկերը» [1, 2]: Ըստ թերթի՝ Ջ. Գարիբալդին նշանավոր անհատ է, երևելի իտալացի, ով իրենից հետո թողեց կատարած բազմաթիվ գործեր, բարի համբավ ու գեղեցիկ հիշատակ:

DOI: https://doi.org/10.58726/27382915-2024.1-141

Գրականություն

1. «Մշակ», Թիֆլիս, 1872, 29 հունիսի, № 25:
2. «Մշակ», Թիֆլիս, 1872, 21 սեպտեմբերի, № 37:
3. «Մշակ», Թիֆլիս, 1873, 23 օգոստոսի, № 32:
4. «Մշակ», Թիֆլիս, 1874, 13 հունիսի, № 23:
5. «Մշակ», Թիֆլիս, 1874, 7 նոյեմբերի, № 44:
6. «Մշակ», Թիֆլիս, 1875, 30 հունվարի, № 4:
7. «Մշակ», Թիֆլիս, 1875, 20 փետրվարի, № 7:
8. «Մշակ», Թիֆլիս, 1875, 25 մարտի, № 12:
9. «Մշակ», Թիֆլիս, 1875, 3 հուլիսի, № 26:
10. «Մշակ», Թիֆլիս, 1878, 14(26) հունվարի, № 1:
11. «Մշակ», Թիֆլիս, 1882, 5 հունիսի, № 99:
12. «Մշակ», Թիֆլիս, 1882, 8 հունիսի, № 100:
13. «Մշակ», Թիֆլիս, 1882, 9 հունիսի, № 101:
14. «Մշակ», Թիֆլիս, 1882, 10 հունիսի, № 102:
15. «Մշակ», Թիֆլիս, 1882, 12 հունիսի, № 104:
16. «Մշակ», Թիֆլիս, 1882, 22 հունիսի, № 110:
17. Галло М. Джузеппе Гарибальди. Пер. с фр., Ростов-на-Дону, 1998, 480 с.
18. Гарибальди Дж. Мемуары. Пер. с. ит., Москва, 1966, 484 с.
19. Дебидур А. Дипломатическая история Европы: от Венского до Берлинского конгресса (1814-1878) / Пер. с фр. Том II, Москва, 1947, 544 с.
20. История XIX века. Под. ред. Лависса и Рамбо. Пер. с. фр., т. 5, Москва, 1938, 598 с.
21. История Италии. Под ред. К. Ф. Мизиано, т. 2, Москва, 1970, 616 с.
22. История Парижской Коммуны 1871 года,. Ред. кол. Желубовская Э. А. и др. Москва, 1971, 802 с.
23. Канделоро Дж. История современной Италии, Пер. с итал., т. 5, Москва, 1971, 512 с.
24. Карпачев С. Масоны. Словарь. Москва, 2008, 634 с.
25. Лурье А. Джузеппе Гарибальди. Москва, 1957, 288 с.
26. Морамарко М. Масонство в прошлом и настоящем. Пер. с. ит., Москва, 1990, 304 с.

27. Невлер В.Н. Джузеппе Гарибальди. Москва, 1961, 128 с.
28. Шури М. Коммуна в сердце Парижа, Пер. с фр., Москва, 1970, 493 с.
29. Sacerdote G. La vita di Giuseppe Garibaldi. Milano, 1933, 960 p.
30. Victor Hugo. ContreI'invalidation de Garibaldi Discour a I'Assambleenationale, 8 mars, 1871 https://www2.assemblee-nationale.fr/decouvrir-l-assemblee/histoire/grands-discours-parlementaires/victor-hugo-8-mars-1871.

Газета «Мшак» об освободительной борьбе Джузеппе Гарибальди

Феликс Мовсисян

Резюме

Ключевые слова: *Италия, объединение, родина, масон, независимость, герой, полководец, преданный нации, патриот*

Деятельность итальянского Рисорджименто, целью которого было свержение австрийского владычества и объединение Италии, нашла широкое освещение в современной армянской общественной мысли и периодической печати.

Газета «Мшак», находящаяся в авангарде восточноармянского либерального течения, обращаясь к этим событиям, отмечала крайне важную роль видного деятеля Рисорджименто Джузеппе Гарибальди в объединении Италии. Газета представляла его биографию, жизнь, полную треволнений, которую считала ярким примером «служения и преданности родине всем своим существом».

Газета «Мшак» именует Дж. Гарибальди «великим итальянским патриотом», бесстрашным отважным полководцем, который всю свою жизнь посвятил благородной борьбе за независимость родины. Дж. Гарибальди, преданный борьбе за освобождение родины, всегда призывал своих соотечественников сражаться во имя свободы и в этой борьбе показывал жертвенность и «непоколебимую твердость воли» на собственном примере, тем самым доказывая, что он верит в независимость Италии.

По характеристике газеты, патриотизм, преданность родине и честность великого гражданина Италии и всемирно известного доблестного полководца Дж. Гарибальди повсюду внушали уважение к народному герою. Именно такие выдающиеся патриоты и герои решают судьбу своего народа, являют возрождение и образ этого народа. Согласно газете, такие личности и самоотверженные патриоты, как Дж. Гарибальди, достойны памятников, песен, славы, чести и бессмертного имени.

Смерть Дж. Гарибальди «Мшак» считает «самым ужасным несчастьем» Италии, которая причинила безграничную боль не только его соотечественникам, но и за пределами его родины. По мнению газеты, смертью Дж. Гарибальди «просвещенный мир сильнее почувствовал гармонию тех интересов, которыми связаны друг с другом различные страны и государства, и еще острее стала необходимость мира».

The Newspaper "Mshak" on Giuseppe Garibaldi's Liberation Struggle

Feliks Movsisyan

Summary

Key words: *Italy, unification, motherland, mason, independence, hero, commander, patriotic, patriot*

Italian Risorgimento, which pursued a goal to get rid of the Austrian yoke and unify Italy, found a wide response in the Armenian public thought, as well as in the press of that time.

The «Mshak», a pioneer newspaper of Eastern-Armenian liberal current, evaluated Giuseppe Garibaldi's role as one of the prominent figures in Risorgimento, in the unification of Italy. The newspaper presented his biography, his touching life, which was nothing but a vivid example of selfless service and complete dedication to his motherland.

«The Mshak» considered G. Garibaldi «a great Italian patriot, fearless, brave commander», who devoted all his life to the noble affair of the independence of his motherland. G. Garibaldi, a devotee of the struggle for freedom of his motherland continually turned to his countrymen to struggle for the sake of freedom. He was a personal example of self-sacrificing and inherent who proved his belief towards the independence of Italy. According to the newspaper, the patriotism and honesty of G. Garibaldi, as the greatest citizen, prominent and immortal commander of Italy, generated great respect for the immortal national hero. Unique patriots and heroes like Garibaldi are eager to decide the fate of their nation, present the origin and nature of that people. According to the newspaper, people should erect monuments in commemoration of such prominent and self-sacrificing individuals like G. Garibaldi, as well as create songs dedicated to them.

According to «The Mshak» G. Garibaldi's death was the most terrible misfortune of Italy, which caused infinite pain not only to the Italians, but also people outside their homeland. G. Garibaldi's death made the «highlighted world» feel the close solidarity among different countries and states, as well as the demand for peace.

Ներկայացվել է 23.01.2024 թ.
Գրախոսվել է 08.02.2024 թ.
Ընդունվել է տպագրության 30.05.2024 թ.